

1.2.4. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ. 2001թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումների իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության զնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ նվազել է 9.1 %:

2001թ. հունվար-փետրվարի բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2001թ. հունվար-փետրվար	2001թ. հունվար-փետրվարը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ,%-ով	2001թ. փետրվար	2001թ. փետրվարը 2001թ. հունվարի նկատմամբ,%-ով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա	518.9	90.9	251.0	93.7
<i>այդ թվում՝</i>				
Երկաթուղային տրանսպորտով	137.8	90.1	92.8	206.2
արտահանվել են բեռներ	27.5	2.2 անգամ	14.9	118.3
ներկրվել են բեռներ	107.8	84.8	77.1	2.5 անգամ
ներհանրապետական փոխադրումներ	2.5	18.8	0.8	47.1
ավտոտրանսպորտով	218.9	110.0	101.8	86.9
արտահանվել են բեռներ	9.7	144.8	5.9	155.3
ներկրվել են բեռներ	35.8	127.4	19.4	118.3
ներհանրապետական փոխադրումներ	173.4	105.6	76.5	79.0
օդային տրանսպորտով	1.6	100.0	0.8	100.0
արտահանվել են բեռներ	0.7	116.7	0.2	40.0
ներկրվել են բեռներ	0.9	90.0	0.6	200.0
խողովակաշարային տրանսպորտով	160.6	73.8	55.6	53.0

Երկաթուղային տրանսպորտ. 2001թ. հունվար-փետրվարին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ նվազել է 9.9 %: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 78.2% (2000թ. հունվար-փետրվարի 83.1% դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 20.0% (նախորդ տարվա հունվար-փետրվարի 8.2 % դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումների՝ 1.8% (նախորդ տարվա հունվար-փետրվարի 8.7 % դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2001թ. հունվար-փետրվարին 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ հանքային շինարարական նյութերի փոխադրման ծավալը նվազել է 42.9%, հացահատիկի և աղացվող մթերքների՝ 40.9%, նավթ և նավթամթերքների՝ 40.6% , ցեմենտին՝ 36.8 % և սև մետաղների ջարդոնին՝ 26,9%:

Վազոնների միջին օրական բեռնաթափումը հունվար-փետրվարին կազմել է 32 վազոն և նախորդ տարվա հունվար-փետրվարի նկատմամբ նվազել է 7 միավորով, իսկ բեռնումը կազմել է 8 վազոն և մնացել անփոփոխ: Նույն ժամանակաշրջանում վազոնապտույտը կազմել է 17.5 օր և նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ արագացել է 5.8 օրով:


Ավտոմոբիլային տրանսպորտ. 2001թ. հունվար-փետրվարին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-փետրվարի ցուցանիշի նկատմամբ աճել է 10.0%, որից հանրապետություն

ներկրված բեռների բաժինը կազմել է 16.4 % (2000թ. հունվար-փետրվարի 14.1% դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 7.0 % (նախորդ տարվա հունվար-փետրվարի 16.4 % դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 4.4% (նախորդ տարվա հունվար-փետրվարի 3.4 % դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 10.3 % (նախորդ տարվա հունվար-փետրվարի 16.4% դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներից՝ 79.2% (նախորդ տարվա հունվար-փետրվարի 82.5% դիմաց):

Օդային տրանսպորտ. 2001թ. հունվար-փետրվարին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը կազմել է 1.6 հազ. տոննա (2000թ. հունվար-փետրվարի ցուցանիշի նկատմամբ մնացել է անփոփոխ), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 56.3 % (2000թ. հունվար-փետրվարի 62.5 % դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 43.7 % (2000թ. հունվար-փետրվարի 37.5 % դիմաց):

Խողովակաշարային տրանսպորտ. 2001թ. հունվար-փետրվարին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-փետրվարի ցուցանիշի նկատմամբ նվազել է 26.2 %:

2001թ. հունվար-փետրվարին բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին միջոցների (տոկոսներով)



2000թ. հունվար-փետրվարին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտը կազմել է 26.8 %, ավտոմոբիլայինը՝ 34.8 %, օդայինը՝ 0.3%, խողովակաշարայինը՝ 38.1 %:

Բեռնաշրջանառություն. 2001թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ նվազել է 24.0%:

2001թ. հունվար-փետրվարի բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների


	2001թ. հունվար-փետրվար	2001թ. հունվար-փետրվարը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %-ով	2001թ. փետրվար	2001թ. փետրվարը 2001թ. հունվարի նկատմամբ, %-ով
<i>Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ այդ թվում՝</i>	353.0	76.0	134.9	61.7
Երկաթուղային տրանսպորտով	39.2	90.7	24.7	170.3
ավտոտրանսպորտով	5.3	147.2	2.8	112.0
օդային տրանսպորտով	1.1	84.6	0.7	175.0
խողովակաշարային տրանսպորտով	308.1	73.8	106.7	53.0

Ուղևորափոխադրումներ. 2001թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումների իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-փետրվարի ցուցանիշի նկատմամբ աճել է 2.7 %:

2001թ. հունվար-փետրվարին ընդհանուր ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2001թ. հունվար-փետրվար	2001թ. հունվար-փետրվարը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ, %-ով	2001թ. փետրվար	2001թ. փետրվարը 2001թ. հունվարի նկատմամբ, %-ով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ այդ թվում՝	23291.1	102.7	11638.6	99.9
Երկաթուղային տրանսպորտով	105.8	114.8	59.3	127.5
ավտոտրանսպորտով	18723.6	102.2	9345.3	99.7
օդային տրանսպորտով	82.4	114.4	40.3	95.7
էլեկտրատրանսպորտով	4379.3	104.6	2193.7	100.4

2001թ. հունվար-փետրվարին ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին միջոցների (տոկոսներով)



1. ԻՐԱԿԱՆ ՅԱՏՎԱԾ

2000թ. հունվար-փետրվարին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտինը կազմել է 0.4%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 80.8%, օդային տրանսպորտինը՝ 0.3% և էլեկտրատրանսպորտինը՝ 18.5%:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2001թ. հունվար-փետրվարին կազմել է 51.8 %, իսկ տրոլեյբուսով՝ 29.4, տրամվայով՝ 17.3 և ճոպանուղով՝ 1,5 %:

Ուղևորաշրջանառություն. 2001թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ աճել 10.9 %:

2001թ. հունվար-փետրվարին ընդհանուր ուղևորաշրջանառության ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2001թ. հունվար-փետրվար	2001թ. հունվար-փետրվարը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ, տոկոսներով	2001թ. փետրվար	2001թ. փետրվարը 2001թ. հունվարի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղ-կմ <i>այդ թվում՝</i>	362.5	110.9	179.9	98.5
Երկաթուղային տրանսպորտով	4.6	102.2	2.4	109.1
ավտոտրանսպորտով	262.1	110.0	130.8	99.6
օդային տրանսպորտով	77.7	116.3	37.6	93.8
էլեկտրատրանսպորտով	18.1	104.6	9.1	101.1

Տրանսպորտային պատահարներ. Հանրապետությունում 2001թ. հունվար-փետրվարին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների, ճանապարհատրանսպորտային պատահարները 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ աճել է 6.9 %:

2001թ. հունվար-փետրվարի ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները

	2001թ. հունվար-փետրվար	2001թ. հունվար-փետրվարը 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ, տոկոսներով	2001թ. փետրվար	2001թ. փետրվարը 2001թ. հունվարի նկատմամբ, տոկոսներով
ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդհամենը	124	106.9	51	69.9
Զոհվել են, մարդ	30	90.9	11	57.9
Վիրավորվել են, մարդ	148	116.5	52	54.2